Խոյթի եւ Սասունի բնակիչները, լսելով իրենց իշխանի նենգ ձերբակալումը, պաշարում են Մուշ, կոտորում արաբ զօրքը եւ ըսպանում Յուսեփին: Սպանողն էր Յոհան Խութեցին, որի բերանից լսել է անձամբ Թոմա Արծրունին եւ գրի առել սպանութեան պարագաները (աչօք իմովք տեսի զայրն զայն որ հարեալն էր եւ ի նմանէ սուղեցի», էջ 133): Յուսեփի փախչում թագնուում է Ս. Փրկիչ եկեղեցու գմբէթում, որ շինել էր ինքը ձերբակալուած Բագարատ իշխանը, եւ այդտեղ է որ սպանուում է:

Պետական պաշտօնեայի սպանութիւնը քաղաքական յանցանք էր: Մեղապարտներին պատժելու համար դրկուում է Հայաստան արաբական զօրք Բուղա անունով զօրավարի առաջնորդութեամբ: Բուղան թուրք էր եւ նա մէջ «որչացեալ բունեալ էր սատանայ զօրութեամբ իւրով», ինչպէս արտայայտուում է պատմագիրը:

Բուղան գալիս է Խլաթ: Այստեղից նախ մտնում է Տարօն՝ պատժելու անմիջական յանցագործներին: Ձերբակալում է Բագարատ իշխանի երկու որդիներին՝ Աշոտին եւ Դաւթին: Բռնում է նաեւ Յոհան Խութեցուն, որ, սպանել էր արաբ պաշտօնեային եւ ապստամբութեան նախաձեռնողն էր: Այնուհետեւ զօրքը երկուսի բաժանուում, մի գունդը Վանայ լճի հարաւային ափուղիով ոմն Ժիրակ զօրավարի առաջնորդութեամբ անցնում է Ռշտունիք եւ խուժում Վանատոպ: Ինքը միւս գնդով ուղղըւում է դէպի Սպահունիք, նպատակ ունենալով շրջապատել Աշոտ Արծրունուն եւ բռնել: Աշոտ փակուում է Թոնաւան գաւառի Նկան անառիկ բերդում: Արաբները հարուածում են ամրոցը պաշարողական արուեստի բոլոր գործիներով, որպիսիք են վիրգահանք, մեքենայք, ոմբաքարք, այլ եւ մի տեսակ հրանօթ, որ ապադայ թնդանօթի սաղմն է: «Հուր եւ ծծումբ նաւթիւ բարձեալ, զոյժ բնութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ եւ մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից եւ զհուրն առընթեր նմին հնարաւորեալ արկանել զամրոցսն»: Ով որ պարսպի մօտ էր կուում պաշարեալների դէմ, հրանօթից (պաշտպանուելու համար ունէր ասուէ հագուստ, պատրաստուած որդէս թաղիք: Բաւական էր թրջել, եւ կարելի էր կանգնել կրակի դէմ առանց վնասուելու:

Պատմագիրը առթից օգտուում է եւ տալիս է մեզ արաբական սպառազէն հեծեալի նկարագիրը: Երիվարները զրահաւորուած էին, ունէին «չոնչապահ, տաչտ գաւակաց, զանգապահս ի չորս կողմանս, լանջաց զէն, մանեակ զանգակեալս եւ մահիկս լուսնաձեւս ի մէջ ճակատուն կապեալ, նիւս երիվարաց երկաթապատ, փորոյն տախտակազարդ զրդեալ ի ձեւ վահանի»: Նմանապէս եւ հեծեալները՝ «զրահ անձամբ, սաղաւարտ ի գլուխ, բազպան ի ձեռս, զանգապան ի վերայ բարձից, օղ ոտից կօշկաձեւ արուեստաւորեալ, վահան ի թիկունս, սուսեր ընդ մէջ, նիզակ ի ձեռին, կապարճ եւ աղեղունք առաջեաւ ի նիւսն ունելով, զարդս ոսկեզարդս եւ արծաթազարդս եւ կամարս ընդ մէջ ածեալ»:

Այս սպառազինութիւնը, անշուշտ, Սասանեան պարսիկներից է անցած արաբներին եւ հաւասարապէս յատուկ է եղել մեր այրուձիուն:

Կռիւն սկսուում էր փողի թմբուկի ձայներով՝ «փողք եւ քնարք հնչէին եւ թմբուկի դափէն»:

Նկան բերդը անառիկ էր եւ, չնայելով արաբների կատաղի զրոհին, Աշոտը պարսպի վրայ «սիրալով ճեմում էր որպէս կորիւն առիւծու»:

Պաշարուածները տեսնելով, որ երկար չեն կարող դիմադրել եւ յամառումը ծանր հետեւանքներ կարող է ունենալ, խորհում են հաշտութեան ելք գտնել, համաձայնելով կատարել բռնաւորի պահանջները՝ «տալ հարկս արքունիս եւ պատանդս»:

Արծրունեաց պատմագիրը ուզում է հաւատացնել, որ Աշոտը դիմադրութեան կողմնակից էր եւ քանի մի գաւառան իշխաններն էին, որ գաղտնի յարաբերութեան մէջ են մտնում Բուղայի հետ եւ խոստանում մատնել իրենց իշխանին պայմանով, որ իրենց ներուի խաղաղութեամբ ապրել «յիւրաքանչիւր տունս»:

Դաւառան իշխանները Բուղային դրկած թղթում յայտնում են, որ Աշոտի եղբայր